թվում է, այնքան էլ բացահայտ չի եղել, ինչպես փորձում են ներկայացնել ան-Նասավին և Ռաշիդ ադ-Դինը։ Պետք է անպայման հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ջալալ ադ-Դինի բանակին, «անհավատների» դեմ ելնելու նրա կոչերի ազդեցությամբ, հաճախ ուղեկցում էին նաև որոշ տեղական մահմեդական իշխանավորների ու զանազան քոչվոր թուրքմենական ցեղերից կազմված զորաջոկատներ[11]։

Սկզբնաղբյուրները բավական համերաշխ են ներկայացնում ճակատամարտից առաջ երկու կողմերի զորքերի նախնական դասավորությունը, կռվի ընթացքն ու ելքը։ Հայ-վրացական զորքերի՝ Գառնիի մոտ, բարձունքի վրա տեղակարգվելու մասին ան-Նասավիի վկայությունը[12] հաստատում և լրացնում են Կիրակոս Գանձակեցին («Իւանէ... կայր հանդէպ նոցա ի վերոյ»)[13] և Միխայել Ասորու ժամանակագրության հայ շարունակողը («Իչաւ (Իվանեն—Հ. Մ.) ի լեառն Գառնոյ, որ կոչի Աղուչերմն»)[14]։ Իվանեի բանակի այս գերադասելի դիրքը, որ հնարավորություն էր ընձեռում հարձակման համար, հայ-վրացական զորքերը չօգտագործեցին։ Կիրակոս Գանձակեցին նույնիսկ Իվանեին մեղադրում է երկչոտության մեջ՝ «տեսեալ զնոսա (խորեզմցիներին—Հ. Մ.) զանգիտեաց, զետեղեալ ի տեղւոջն»[15]։ Նկատելով դա, Ջալալ ադ-Դինը որոշեց նախահարձակ լինել. խորեզմշահի հետ միասին գրոհի նետվեց նրա բանակի ձախ թևը, որտեղ դասավորվել էին նետաձիգները՝ հակառակորդին հեռվից հարվածելու համար[16]։ Իվանե աթաբեկը խորեզմցիների հարձակմանը դիմագրավելու համար ուղարկեց առաջապահ ջոկատը՝ Շալվա և Իվանե Ախալցիխեցի իշխանների գլխավորությամբ։ Ինչպես պատմում է Վրաց ժամանակագիրը, «Երբ մերձեցան [վրաց] նախահարձակներն ու սուլթանը, այն ժամանակ Իվանե աթաբեկը ոտը կախ գցեց։ Ասում են, թե թշնամություն կար [նրա] և ախալցիխեցի Շալվայի ու Իվանեի միջև... Վրաստանի հիմնովին ավերմանը դրդեց, ինչպես ստորև կերևա, երբ Իվանե աթաբեկը մարտի ժամին ետ կանգնեց և այլևս չէր գնում դեպի մարտնչողները։ Մինչև բոլոր նախահարձակները մարդ ուղարկեցին [Իվանե աթաբեկի] մոտ և ասացին. «[ընդհուպ] մոտեցել ենք սուլթանին ու նրա բանակին, մենք խիստ սակավաթիվ ենք, և ծանր մարտ է մեզ սպասում։ Ուղարկիր մեզ [օգնության] թագավորական քաջ զորքերն ու քաջությունը քո»։ Այսպես երկու-երեք անգամ [մարդ] ուղարկվեցին, սակայն նա ոչինչ չէր պատասխանում... Իվանե աթաբեկն ու վրացական զորքը տեսնում էին ուժգին մարտը և չէին խղճում ազգակիցներին ու հավատակիցներին՝ Քրիստոս խոստովանող թուրեցիներին ու նրանց հետ՝ բազում անվանիների, այլ կանգնել էին հեռվում, և Իվանե

---

11 Խորեզմցիների բանակի խայտաբղետ կազմի մասին վկայում է Կիրակոս Գանձակեցին. «Եւ կուտեաց (խորեզմշահը—Հ. Մ.) զօրս անթիւս ի պարսից, և ի տաճկաց, և ի թուրքաց...» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 224)։ Ջալալ ադ-Դինի և թուրքմենական ցեղերի ու տեղի տիրողների համագործակցության մասին այլևայլ առիթներով խոսում է նաև ան-Նասավին (ан-Насави, с. 149, 160—161, 279—280)։

12 ан-Насави, с. 158.

13 Կիրակոս Գանձակեցի, էջ 224—225։

14 Միխայել Ասորի, ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870, էջ 527։

15 Կիրակոս Գանձակեցի, էջ 225։

16 ан-Насави, с. 157—158.